

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՄԱՐՏ 1, 1898. ԹԻՒ 5 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 149

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅՔԻ տարեկան բաժանորդագրին է երկու առլար, կամ 10 ֆրանք, (4 րուպլի), ամեն երկրաց համար:

Հասցէ— Editor of Haik,
341 West 23rd St. New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական մշմարք.—Նիւ Եոլք հե-
րալտի ուղղուած մեր համակը.—Խոստովա-
նիմ և ոչ ամաչեմ.—Առողջաբանական մշմարք
:— Նամակ խմբագրութեան.— Գրողներու
վարձքը Եւրոպացւոց մէջ.—Թունաւոր զրկե-
մեր.— Այլիսայլք.—

ԽՄԻՐԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐԻ

Նիւ Եորքի մէջ մինչև հիմա կազմ-
ուած հայ ընկերութիւններու ամենէն
հաստատահիմն և արդիւնաշատը ինիլ կը
խոստանայ Հայոց Բարեգործական Ընկե-
րութիւնը: Պատրաստութիւն կը կատար-
ուի պաշտօնասենեակ մը կամ Labor Bu-
reau մը բանալու:

Ցաւալի է որ այսպիսի բարենպաստակ
ձեռնարկի մը յաջողութեանը հակառա-
կող հոգիներ կան մեր մէջ: Պիտի զար-
մանա՞ք եթէ իմանաք թէ այդ հոգիները
Նիւ Եորքի մէջ վերջերս հիմնուած հայե-
րէն շարժաթերթին վարիչքն են: Ահա
թէ թերթը ինչպէս որոմնացան կը լինի
ցորեն սերմանելու պատրուակաւ:—

«Ատենապետի հրաւերին պատասխանող
առաջին ազգայինն եղաւ, կ'ասէ, Տ. Կիւլ-

պէնկեան, որ քաջի մը քաջալերական ընտիր
խօսքեր ըրաւ, համեմելով զայնս 100 տոլարի
նուէրով մը...» Եւ կը կցէ ու խորհրդա-
ծուծիւնը.

«Ո՛ր կ'ըսէ թէ հրաշքներու դարն անցած
է. Աստուած քարերէն կրնայ Արրահամու
զաւակներ յարուցանել:»

Ընթերցողք այնպէս պիտի հասկնային
այս դիտողութենէն թէ Տ. Կիւլպէնկե-
անի մասնակցութիւնը այս բարեգործա-
կան ձեռնարկին՝ տարօրինակ երեւոյթ մ'էր,
հրաշք մը: Սակայն Տ. Կիւլպէնկեան,
ինչպէս բոլոր Կիւլպէնկեան գերդաստանը,
ծանօթ է իրր տուող յօգուտ ազգային և
բարենպաստակ գործերու: Տ. Կիւլպի
Կիւլպէնկեան ամէն շաբաթ, գրեթէ ամեն
օր, իւր քսակը բանալու առիթ կ'ունենայ
ինպաստ հայ կարօտելոց տալու համար:

Մեր ծանծաղամիտ գրչակներու և
ինքնակոչ ատենախօսներու սիրելի մէկ
գործն է հարուստներուն դէմ ճամարտա-
կիւ: Երիկեան թերթիկն ալ այսօր Կիւլ-
պէնկեանի, վաղը Թաւաշանճեանի կամ
այլ մեծատան մը վրայ կը ցնցէ իւր տըղ-
մաթաթաւ թեւերը և գուցէ կը կարծէ
այդպէսով փառաւոր մասնակցութիւն
մը ունենալ ընկերվարական լուսաւորու-
թեան դարավերջիկ նշոյլներուն: Բարե-
բաղդօրէն մեր հարուստները այդ փառ-
քուններու համար անմատոյց բարձրու-
թեան վրայ կը կենան:

Մենք հարուստի խնկարկունքէն
չենք փրօցուողոյ փարթամին փողին վը-
րայ «թքել ենք» միշտ երբ անկէ շահ
չկայ մարդկութեան. բայց անկեղծօրէն
կը յարգենք այն հարուստները որք բարե-

գործութեան ձեռնարկներու համար կուտան, դարձեալ կուտան ու մէջտեղ կուտան: Այս կարգէն են մեր այս քաղաքի հարուստները: առանց բացառութեան: Այս մեզի պարծանք է:

* *

Շարաթաթերթը, քիչ մը հեռուն, աւելի կը պարզէ իւր ոգին, «սպէ» փառքսերով:—

«Տալու տրամադրութիւն ունեցող շատեր, լուռ ու մունջ, լոկ հանդիսատես եղաւ (եղան առել կ'ուզէ) այդ ազգագուտ ձեռնարկին...: Տարախոյս չի վերցնէր թէ շաղտնի պատճառ մը կար...: Բարեգործական ընկերութեան պարտականութիւնն է, այս պարագաներուն տակ, ընդհանուր ժողով մը կազմել, բացառել և բացատրել տալու համար ամեն մութ կէտեր...»

Մութ կէտեր: Պարոններ, ժամը 6 էր, և մեր ժողովուրդը ստիպուած էր մեկնել եկեղեցիէն ուր հիւրընկալուած էր և թոյլ տալ որ օտար պաշտօնեայքը նոյն երեկոյի կրօնական պաշտամանց պատրաստուէին: Եթէ ժողովը վերջացնէր հարկ չլինէր, դեռ յոյժ շատեր պիտի մասնակցէին հանդանակութեանը. դա լուսոյ պէս պայծառ է: «Մութ կէտերը» ձեր խաւարակուռ մտքի մէջ են, նորս իւրոյս կը հանենք եթէ հարկ չլինի:

Պարոններ, դժուար է ձեզ ընդդէմ խթանի աքացել:

* *

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Գործադիր Ժողովոյ անդամք

Տեարք

Տ. Կ. Քէլէկեան, Ա. Շիշմանեան, Արզումանեան, Չատրճեան, Պողոս Յակոբեան և Հայկունի:

Խնամակալու Յանձնախմբի անդամք

Տեարք

Կիւլապի Կիւլպէնեան, Յ. Ս. Թաւ. Հանճեան, Յարութիւն Պ. Եարսեմեան,

Տր. Տատրեան, Տր. Այվաղեան, Տր. Միրաքեան, Յովհաննէս Հիւրթիւզ, Մ. Չաճուեան, Տր. Փիթըրզ, Տր. Մաք Արթըր, Տր. Միթմսըն, Տր. Պարլը, Վ. Բոնսթանթ, Ճանսըն, Պրէնարտ և Ճան Բունի:

Ժողովոյ Օժանդակ Յանձնախմբի անդամք
Տեարք

Ամբակում Տիւղեան, Կարապետ Պիւրիւնճիւքեան, Գարրիէլեան, Չ. Պ. Միհրան, Աւետիս Մաթթիսեան, Համբարձում Մարկոսեան, Յասսուրեան, Արսէնեան և Թաղէոս Գրիգորեան:

* *

Նիւ Եորքի Հայուհեաց Որբերնամ Ընկերութիւնը, որ անցեալ օր կազմակերպուեցաւ, արդէն քսան և մէկ անդամներ ունի: Պաշտօնեաներն են—Օր. Պէլքուէլ՝ Պատուոյ Նախագահ. Տիկին Այվատ՝ Ատենապետ. Օր. Սէղբոսեան՝ Ատենադպիր. Տիկին Թաւաճեան՝ Դասնապետ. Տիկին Քէլէկեան և Տիկին Տիօնեան՝ Խորհրդական. Տիկին Սինան, Տիկին Գրիթապեան և Օր. Գոստիկեան՝ Հաւաքիչ:

Ընկերութիւնը որոշած է իւր ամեն անդամներէն չաքաթական գումար մը ստանալ, առ նուազն 5 սէնթ և առ առաւելն 1 տոլար. այժմ 4½ տոլարի չափ եկամուտ ունի, և օր ըստ օրէ աւելնալու վրայ է:

* *

Նիւ Եորք Հէրալտի Փետր. 23 թուով հրատարակուեցաւ մեր նամակը նկատմամբ այդ թերթի առաքելութեանն ի Հայաստան: Այդ նամակաւ կը հերքէինք նորա թղթակցին բոլոր գլխաւոր եզրակացութիւններն, թէ և ոչ այնքան խայթիչ ոճով որով արժան էր հերքել զայնս, բայց և այնպէս այնպիսի յստակութեամբ մը որ Հէրալտի ընթերցողաց ամենուն ալ հասկանալի է: Բնագիրն ու թարգմանութիւնը ներկայացնենք ՀԱՅՔԻ ընթերցողաց ալ:

(Հէրալտի ուղղում)

(Ենթադրեալ թարգմանութիւնը.)

Կ՝ԱՍԷ ԹԷ ԹԻՔԵՐՆ ԱՆՀԱՆԴԻՍՏ ԵՆ՝
Յօրութեամբ իր յայտարարէ թէ Յոքա
խղճի խայթ ունին հայաստանի համար

Առ խմբագիրն Հէրալտի —

Իրիւն Ամերիկացի և իրիւն խմբագիր
Հայերէն ՀԱՅԲ Լրագրոյ, շատ հետաքրք-
րուած եմ ես ձեր առաքելութեամբն
ի Թուրքիա: Տր. Հէփուրթի Հայաստա-
նէն գրած նամակներն լի են հրապուրով
և քաջութեամբ: Թէպէտ Սուլթանի երկ-
րէն կը դրէ, չի՛ վարանիր նա յայտարա-
րել թէ «Թուրքիա երբեք գործնական
բարենորոգումներ չսխիտի կազմակերպէ»
և թէ Հայերն ապագոյցած են իրենց ըն-
դունակութիւնը դիւցազնութեան և մար-
տիրոսութեան, «որ կը ցուցնեն յոյժ բար-
ձր բնութեամբն յատկութիւններ»
ի խնդրոյ Սուլթանին ուղեւորիլ ի Թուր-
քիա և նմա, գրեթէ երեսին, ասել այս-
պիսի անախորժ ճշմարտութիւններ՝ կը
ցուցնէ ձեր յանձնակատարին բարձր բը-
նաստութիւնը:

Նկատելով Հայկական խնդրոյն բարդ
ընթացիւն և Տորթոքին բաղդատարար
յոյժ քիչ ատեն անցունելն երկրին մէջ,
անակնկալ բան մը չէ որ ինչ ինչ իրողու-
թիւններ և երևոյթք խուսափած լինին
իւր գիտողութենէ: Նա բնականապէս
ի հուպ եկած է պաշտօնական Թրքաց,
ոսկայն աներկբայ եմ թէ ամբողջ հասկա-
նութիւն պիտի զգար նա մարդկային բը-
նութիւնը և կրօնից փիլիսոփայութիւնը
ուսումնասիրելու տեսակետէն՝ եթէ Հա-
ղորդեցած լինէր հասարակ Թրքաց հետ,
որք ոչ միայն համոզուած չեն «թէ այն
ահաւոր ժամուց մէջ Աստուծոյ լաւ ծա-
ռայութիւն մը մատուցին» այլ և կը նեղ-
ուին «խղճի տագնապէս»: Ոչ-պաշտօնա-
կան Թրքաց մէջ այն զգացումը կը տիրէ
թէ Ալլահ պիտի պատժէ գիրենք այն
խժդոթութեանց համար զորս գործնային
խեղճ Հայերուն դէմ: Ոմանք հրապարա-
կաւ յայտարարեն են թէ այլ ևս պիտի
չհաւատան Ալլահի եթէ կոտորածներուն
համար պատիժ չկրնան: Թուրք կնիկներ
եղած են որ Խարբերդի կոտորածին պա-
հուն՝ լուսամուտներէն կանչեր են իրենց
մարդոցը. «մի՛ սպաննէք: Ալլահի բար-
կութեանը պիտի պատահիք»: Թուրքը
ոմանք յայնմ հետէ խենթեցած են խղճի
տագնապէս: Այն սարսափելի դէպքերու
պատմութենէն հանուելու դասերէն մէկն
է այս՝ թէ մարդկային խիղճը դիւրաւ չի
խաբուիր և կը մնայ ի վեր քան զեկեղե-
ցին, երբ սա կ'արտօնէ անարդարութեան
ու անիրաւութեան գործեր:

Երանի՛ թէ Տր. Հէփուրթ, իրիւն
պաշտօնեայ ճշմարտութեան, պատմէր

Սուլթանին զպատմութիւն Սարբակոնի՝
միոյն ի հովիւ թագաւորաց, որում թեքէի
աստուածը երեւնալով ի տեսնան, հրա-
մայեց նմա կոտորել Եգիպտոսի բոլոր
քահանաներն: Թագաւորն խորհեցաւ թէ
աստուածները այլևս չէին ուղեր որ ինքը
թագաւորէր, որովհետեւ իրենց սովորու-
կան կամացն ա՛յնքան հակառակ բան մ'ա-
նել կը հրամայէին անոր, և քաջուեցաւ
յնթով պիտի: Այս պատմութիւնը յսակ
կերպով պիտի հասկցնէր նմին վեհափա-
ռութեան թէ ի՛նչ կ'ուզեն իրմէ Ալլահն
և մարդկութիւնը:

Ներեցէք որ ուրիշ դիտողութիւն
մ'ալ աւելցնեմ: Եթէ Տր. Հէփուրթ
ուսած լինէր ոչ միայն կոտորածոց պատ-
մութիւնը այլ նաև Հայաստանի թրքա-
կան վարչութեան պատմութիւնը 1885 էն
ց1895, հաստատ պիտի համոզուէր թէ
Վարդերն դիտմամբ ծրագրուած էին պա-
լատէն և դէպքերու ընթացքը ըստ այնմ
ղեկավարեալ: Այն հայեցողութիւնը թէ
Վարդերուն գլխաւոր պատճառը քանի մը
հայ յեղափոխականաց ապստամբական
փորձերն եղած են, գուհացուցիչ չի՛ թուիր
Տր. Հէփուրթի, զի որոշ կը տեսնէ վիթ-
խարի անհամեմատութիւնը ընդ մէջ են-
թագրեալ պատճառին և աղբեղուցիչ ար-
դիւնքին:

Թուրք կառավարութեան սովորու-
թիւնն է Վարդել իւր քրիստոնեայ հպա-
տակներէն անոնք որ չարաչար կառավար-
ուելու դէմ կ'առարկեն: Իժուար խնդիր-
ներ լուծելու բռնավարական կերպ մ'է
դժգոհ ցեղերն ջնջել: Եթէ Հայք քան
զՅոյներն, Նեստորականներն, Մարոնիդ-
ներն ու Պուլիարներն աւելի սոսկալի բա-
ժին մը ունեցան, շնորհակալութիւն Ապ-
տիւլ Համիտի, որ գիտցաւ պատրաստել
արհաւիրքը, և իրագործելու համար իւր
հակահայկական ծրագիրն՝ ընտրեց պատեհ
պատմական վայրկեանը:

Վերջին խօսք մը հայ յեղափոխակա-
նաց մասին: Մամուլը յոյժ խիստ եղած
է անոնց համար: Ես ինքնա անոնց ամե-
նախիստ դատիչներէն եմ, բայց անոնց
մեթոտներն և քաղաքական իմաստու-
թեան պակասը քննադատած եմ, ոչ եր-
բէք անոնց նպատակը: Անոնց մէջ ալ
դիւցազններ և մարտիրոսներ եղան: Ճշ-
մարտութիւնը սա է թէ Թուրք կառա-
վարութիւնն եղաւ հայ յեղափոխութեան
ստեղծիչը, և առ այդ ձեռք առնուած ա-
մենէն արդիւնաւոր միջոցն էր Բուրդ-
Համիտիէ գնդոց ստեղծումը:

Մ. Գամպոն, Ֆռանսական Հանրապե-
տութեան ազնիւ դեսպանն ի Կ-Պոլիս,

պաշտօնական հաղորդագրութեան մը մէջ, փետր. 20, 1894 թուականաւ, գրեց իւր կառավարութեան թէ երկու տարի յառաջագոյն թուրք բարձրագիւր պաշտօնեայ մը իրեն ասաւ. «Հայաստանի խնդիր չկայ, բայց մենք պիտի ստեղծենք զայն:» Մ. Գամպոն կ'որակէ Համիտիէներու ըստեղծումը իբրեւ «պաշտօնական կազմակերպութիւնը աւարառութեան իփնաս հայ քրիստոնէից:»

Արդարեւ դա պաշտօնական սրբազոր-ծումն էր կալուկապուտի, սպաննութեան և ամեն տեսակ զազրագործութեան: Սուլթանը գիտէր թէ հայ երիտասարդներն չպիտի մոռանէին այդ ամենուն: Մենք ալ կը հասկնանք, եթէ ոչ աւելի գէթ որքան որ Սուլթանը կը հասկնար, թէ կրթուած Հայոց՝ որք մարդկային արժանապատուութեան դգայումն ունէին՝ անկարելի էր չքրթնիլ, չբողոքել, և, ինչ ինչ դիպաց մէջ, չապստամբիլ ամենէն «ապստամբեցուցիչ» խոփոթութեանց դէմ որք կը դիզուէին հէգ և անոք Հայերուն վրայ: Հայերը բարոյապէս մեռեալ պիտի համարէինք եթէ գէթ տըկար անդրագործութեան մը նշաններ չը տային իրենց հարստահարչաց ամենէն գաղանային, ամենէն գրգռիչ գործողութիւններուն դէմ:

Մ. Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Նիւ Եորք, փետր. 22, 1898:

ԽՈՍՏՈՎԱՆԻՄ ԵՒ ՈՉ ԱՄՍՁԵՄ

Մեր խմբագիրներէն ոմանք ամօթ կը սեպեն հրատարակել իրենց բաժանորդաց թիւը: Եթէ թիւը փոքր է, ուրեմն թերթը արժէք չունի՝ պիտի խորհին լըսողները, և թերթին վարկը աւելի պիտի նուազի:

ՀԱՅԲԻ խմբագիրն ամօթ չի համարիր խոստովանիլ թէ որքան քիչ բաժանորդ ունի: 1897 թուականին ունէր իբր 225 բաժանորդ: Այս տարի... հարկաւ չպիտի ուզէի գաղտնիքը դուրս տալ օտարաց, բայց մեր մէջ հոգ չէ երէկ երիտասարդ մը կը հարցնէր թէ 500 գոնէ չկայ: — Ո՛չ, այս տարի, մինչև փետր. տար 26 մեր բաժանորդաց թիւը հասած է... զարհուրելի թուանշան... 81 ի՛:

Ահաւասիկ հաշիւը —

Նիւ Եորք քաղաք 3, Ֆրէզնոյ 5, Նիւ Հէյվըն 4, Նիւ Պրիթէն 4, Ուսթըր 3, Շիքակոյ 3, Պոսթոն 1, Փրովիտէնս 1, Ֆիլատէլֆիա 1. — Մօլտըն, Հէյվընհիլ, Հըստըն, Էթըլպօրօ, Նիւպէրիփորթ, Ուօքէկըն, Կրէնտ Րէփիտս և Սէնթրըլ Ֆօլզ, երկուական. և ուրիշ երեսուն տարբեր քաղաքներու մէջ մէկ մէկ բաժանորդ ունինք հիմա:

ԿԱՐԵՒՈՐ ԽՄԱԳՐԱԿԱՆ ԱՁԴ

Անոնք որ համոզուած են թէ ՀԱՅԲԸ իրեն բոլոր թերութիւններով հանդերձ՝ ասկէ աւելի բաժանորդի արժանի է, պէտք է ինքնադրդոր աշխատին բաժանորդ գտնելու. և այն բաժանորդները որոնք թէև ՀԱՅԲԸ չեն մերժած բայց դեռ իրենց բաժանորդագինը չեն զրկած, թող փութան (եթէ փութալ բառը բարկացունել չեն ուզեր) մինչև մեր յաջորդ թիւը հրատարակութիւնը մեզ հասցնել զայն:

Որպէս զի մեր բաժանորդներն ու բարեկամները այս խնդրոյն ստիպողական կարեւորութիւն տան. ՀԱՅԲԻ յաջորդ թիւը պիտի հրատարակենք Ապրիլ 1 ին, այսինքն ամիսէ մը:

Մաղթենք որ այս ծանուցումը արթնցնէ մեր բարեկամները որպէս զի յաջորդ թիւով կարենանք աւետել թէ ունինք գոնէ 300 բաժանորդ:

Աւելորդ չէ նաև յայտնել թէ հարիւրաւոր անձերու թերթ կը յղենք առանց բաժնեգին ստացած լինելու, և կան չատեր որ իրօք կարող չեն վճարելու. ուրեմն արժան է որ կարողները քանի մը սուրբ նուէր անելով՝ անկարողներուն բաժինն ալ վճարած լինին:

Առանց վարձքի իւր ժամանակը տուող և թերթին համար հարիւրաւոր տողարներ ալ երբեմն քսակէն զոհող խմբագիր մը կարող է առանց ամօշնալու խօսիլ նուիրատուութեան մասին:

Ո՛վ որ օգնել կ'ուզէ, թող հրամէ:



ԵՌՈՂՋԱՐԱՆՆԵՐ

ՆՇԱՄԵՐՔ

ՄԱՅՐ, ՄԱՆՈՒԿ

Կնոջ քաջառողջութեան գլխաւոր մէկ պայմանն այն է որ նորա երեք կարգի ծննդական գործարանք, այսինքն ձուարանք, արգանդը և ստինք, փոխ ի փոխ գործեն: Նախ ձուարաններն են գործունեայ, ամսօրեայ պարբերութեամբ: Իսկ երբ յղանայ, արգանդը կը լինի գործունէութեան կեդրոնը և ձուարանք կը հանգչին: Մանկան ծնանելէն յետոյ, ստինքը կը սկսին իրենց կաթնատուութեան պաշտօնը, որոյ տեղողութեան երկար ամիսներուն մէջ՝ ձուարանք և արգանդ հանգիստ կը վայելեն:

* *

Իւր զաւակը ստնտուի յանձնող կամ կովու կաթով սնուցանող մայրը թէ՛ իրեն փնտս կ'անէ թէ զաւակին: Զաւակին փնտս, վասն զի մօտեան կաթէն ու կաթնտուութեան հետ բնականօրէն կապուած գուրգուրանքէն կը զրկուի. փնտս նաև մօրն, զի սա չգործածելով իւր ծիծերը՝ սեռական գործունէութեան նոր շրջան մը կատարելու կ'ենթարկէ ձուարաններն և գուցէ նաև արգանդը: Ուրիշ փնտս մ'ալ այն է որ ծիծ տալէ հրաժարող կնոջ ստինքը կը պղտիկան և սերնդէ սերունդ այդպէս վարուող պորտերու մէջ ստինքը վերջապէս աներևոյթ կը լինին: Այն ատեն բամպակի խոշոր ըլրակներով հարկ կը լինի կուրծքի տափակութիւնը դարմանել:

* *

Այս տարի Հայոց Օրացուցի մը մէջ գրուած է թէ «6 կամ 7 ամիսէն աւելի կաթ տալու չէ մայրը»: Շատ սխալ: Սովորական պայմաններու մէջ պարտի մայրը 16 կամ 18 ամիս կաթ տալ չարունակել: Միայն իններորդ ամսէն անդին կրնայ, մանաւանդ եթէ չատ զօրաւոր կազմ չունի, իւր կաթէն զատ տալ ապուրի նման պարզ երախայկան սնունդներ ալ, քիչէն ոկսելով: Կաթէն կտրելը աստիճանաբար պէտք է լինի, ոչ մէկէն իմէկ: Բնութիւնը ոստում չգիտէ:

* *

Բնութիւնը կենաց շրջաններն այնպէս վճռապէս չի բաժներ ինչպէս մենք կ'երեւակայենք. նա կամացուկ մը կ'անցունէ փուլէ ի փուլ: Երբեմն փափուկ օրիորդի մը թեւէն բռնելով, այսպէս ասենք, կը հրաւիրէ զայն անցնիլ կենաց յաջորդ շրջանակը, բայց եթէ տեսնէ թէ կը յոգնի, կը վերադարձնէ զայն առջի շրջանակը և ժամանակ կուտայ նմա զօրանալու և լաւ ևս պատրաստուելու: Բնութեան այս զարմանալի փափկանկատութիւնը չհասկնալով՝ մայրեր շատ մտահոգ կը լինին երբ իրենց դեռահաս դստրիկի արբունքի պարբերական նշանը ընդմիջուած կը տեսնեն. մտատանջութեան տեղի չկայ սակայն: Այդ պարագայից մէջ տգէտի գործ է դեղերու միջոցաւ նշանին վերերևումը պահանջել բնութենէն, այլ պէտք է անատ սնունդ և մաքուր օդ տալ օրիորդին:

* *

Հայաստանի մէջ մայրեր բազմածին են, բայց ծնելոց չատերն կը մեռնին երախայութեան և մանկութեան մէջ: Աւելի լաւ է որ երեք կամ չորս զաւակ միայն լինին բայց ընդունին մարմնոյ և մտքի բոլոր խնամքը որուն կը կարօտին. քան թէ ութ կամ տասը ծնելոց կէսը մեռնին ու մնացածներն ալ տկար կամ տրգէտ մնան:

Քիչ են այն ընտանիքներն ուր բազմաթիւ լինին զաւակներն և միանգամայն առողջ մարմին ու առողջ միտք ունենան: Եթէ Հայաստանի մէջ ծնած Հայ մանուկներու մեծ մասն ապրէին, հիմա 2 միլիոն չէ, 30 միլիոն Հայ կը գտնուէր:

* *

Դառնիէ, Փռանսացի մանկաբարձ ուսուցիչը, կը պատմէ թէ ռուս գեղջուկ մը, Ուազիլէֆ, իւր առաջին կնոջմէն ունեցաւ չորս ծննդաբերութիւն չորսական զաւակով, եօթը ծննդաբերութիւն երեքական զաւակով, և տասնըվեց ծննդաբերութիւն երկուորեակ: Երկրորդ անգամ ամուսնացաւ գեղջուկը, և ունեցաւ երկու եռեակ և վեց երկուորեակ: Աւելի հիանալին այն պարագայն է որ ի միոյ հօրէ այդ 87 զաւակաց 84ը կ'ապրէին:

* *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Detroit Mish. 1898 Feb. 20th

Սիրելի Տէր,

Թուէս մի քանի շաբաթներ առաջ Ձեր Յարգութեան խմայուցած էի թէ «Հայք»ը դադարեցնել բարեհաճիք բայց վերջը միտքս փոխեցի ու այդ ճաշակաւոր թերթը կրկին շարունակել կը բաղձամ, ուրեմն այս նամակիս մէջ կ'ամփոփեմ՝ բաժնեգինս որ բարեհաճիք ինձ բաժանորդ համարիլ կրկին:

Ամօթ մեր Ամերիկայի Հայ եղբարց որ ՀԱՅՔի պէս ճաշակաւոր թերթի մը 2—3000 բաժանորդ չեն տար որ այն թերթ դոնէ շաբաթը մէկ անգամ հրատարակուելու կարող ըլլար: 98 ի վերջի երկու թիւերը ինձ աւելի սիրելի եկաւ, ուղիղը մանաւանդ տա «Երիտասարդին երգը» ինձ 2 տոլարի չափ ինդացուց: Ափսո՛ս մեր Հայութեան որ թերթ մի ապրեցնելու կարող չեն կամ կարող են ու արծաթը ամեն բանէն աւելի լաւ կը ռեպեն... Տայ Ամենակարողն այդ թերթին յաջողութիւն ու Ձեզ նման մեր ճաշակաւոր եղբարց երկայն համբերութիւն մեր անճաշակ Հայոց բարի վարմունքներուն համար: ու նոցա մի քիչ ճաշակ տայ. Ամէն:

ՏԻԳՐԱՆ Յ. ՄԱՆՆԱՐԵԱՆ

Յ. Գ.

Ես վերջերս Ռուսիա գացած եմ ու հոն իբր 2½ տարի բնակած եմ ու Ռուսաց կառավարութիւն ինձ լաւ սիրելի եկած է. այն տեղի մեր Հայ եղբարք մեր Թուրքիոյ Հայոցմէն խիստ շատ ազատութիւն կը վայելեն Ձարի կառավարութեան ներքեւ, ու առևտուրք ալ խիստ լաւ կացութեան մէջ են: Երանի՛ թէ մենք անոնց հպատակ լինէինք և ոչ ինքնօրինութիւն ունենայինք...:

ՆՈՅՆ

ԳՐՈՂՆԵՐՈՒ ՎԱՐՁՔԸ

ԵՒՐՈՊԱՑԻՈՑ ՄԷՋ

Կլատսթոն գրախօսական յօդուած մը գրելու համար հազար տոլար կ'առնու: Հայեր կան որ չեն կարծեր թէ հազար յօդուածը տոլար մը կ'արժէ:

Բրդինի 64 գրքերն 20 հազար տոլար տարեկան եկամուտ կը բերեն իրեն:

Տիկին Հրմֆրի Ուօրտ 40 հազար տոլար առեր է «Րոպէրթ Էլմսթր» գրքին համար:

Սուինգուրն տարին 5 հազար տոլար կը շահի իւր քերթուածներէն, թէ և սակաւագիր բանաստեղծ մ'է:

Թէնիսընի համար կ'ասեն թէ իւր կենաց վերջին տարիներուն մէջ տարին 60 հազար տոլար կ'ընդունէր Մաքմիլըն կոչուած հրատարակչական Տնէն:

Ջօլայի առաջին 14 գրքերը 220 հազար տոլար բերած են իրեն:

Ամերիկայի երգիծաբան Մարք Թուէյն պարտքը վճարելու համար անցեալ տարի ուղեց բանախօսութիւններ անել և ձեռնարկեց ուղեւորութեան մը այդ նպատակաւ: Կ'իմանամ թէ տարուան մը մէջ 8) հազար տոլար շահած է բանախօսելով, լէքսըն տալով:

Ամերիկայի մէջ գլխաւոր թերթերու խմբագրապետներն մինչև 20 հազար տոլար տարեկան թոշակ կ'ընդունին:

Ատոնց հետ բաղդատենք մեր ազգին մէջ եղածը: Հարկաւ չենք մոռնար մեր ազգին թուական փոքրութիւնը և չլիտի պահանջենք որ մեր թերթերն ալ 100 հազարներով բաժանորդ ունենան և մեր գրքերէն ալ բերաւոր օրինակներ սպառին: Բայց միթէ մեր ազգին պատիւ կը բերէ՞ այն խեղճ, սղորմելի վիճակը ուր կը դառնան մեր գրողներն ու մեր գրքուածներն՝ նիւթական տեսակետէ: Աւելի քան 3 հազար բաժանորդ ունեցող հայերէն թերթ մը չկայ. հազարէն պակաս է շատերունը: Օգտակար գրքեր կը հրատարակուին սրոցմէ հազիւ հարիւր կամ երկու հարիւր օրինակ կը վաճառուին «Արաքս» ճոխ և պատկերազարդ հանդէսը կաղ ի կաղ կրնայ ի լոյս գալ: Գրեթէ բոլոր խմբագիրները կը տրանջեն թէ բաժանորդ քիչ ունին: Պատճառն ի՞նչ է:

Արդեօք այն է պատճառը թէ մեր գրքերն ու պարբերական հրատարակութիւնք չեն հաւասարիւր Եւրոպացւոցն: Կը պատասխանեմ թէ մերիններն Եւրոպայէնաց հաւասար են երբեմն, չատ դէպքերու մէջ թարգմանութիւն են, երբեմն մերիններն Եւրոպականաց միջակէն ալ վեր են. և կը համարձակիմ ասել թէ մեր ամենէն քիչ արժանիք ունեցող հրատարակութիւններն անգամ աւելի արժէք ունին քան մեր հասարակութիւնը երբէք կ'ընծայէ անոնց:

Ուրեմն ի՞նչ է պատճառը: Արդեօք ազգին լազաւորութիւնն է պատճառը:

Բայց մեր ազգը աղքատ չէ։ Թուոյն նա-
յելով՝ հարուստ է կամ գոնէ ունեւոր։
Վերջին տարիներու դէպքերը իրաւ նուա-
զեցուցին մեր ազգին տնտեսական ոյժը,
բայց մեր լրագիրներու և գրքերու քիչ
ծախուիլը վերջին տարիներու երևոյթ չէ,
բռնաջուր կար սյգ վիճակը։

Ժողովրդի ազատութիւնը, ընթերցա-
սիրութեան պահպան է պատճառ։ Այո՛,
դա պատճառ մէ, բայց Եւրիչ գօրաւոր
պատճառ մը կայ։

Պատճառն այն է որ մեր ընթերցող
փոքրամասնութեան մեծագոյն մասը յօ-
ծար չէ գրականութեան համար պրամ
ծախք անել։ Ուրիշինը փոխ առնուլ և
կարգալ կուզեն։ Շատ մը ունեւոր Հա-
յեր ունին այդ գծուծ սովորութիւնը։

Մեր խմբագիրներէն մին անցեալ տա-
րի քանիցս սրտնջեց, և իրաւամբ, թէ
Հայ երիտասարդաց Ընկերակցութիւններն
իւր թերթը ձրի կ'ուզեն։ Դիցուք թէ
երիտասարդ մը կարող չի համարիր զին-
քը անկախապէս բաժանորդ գրուիլ, բայց
ի՞նչ կը նշանակէ երբ նա, իբրև անդամ
Ընկերակցութեան, յօծար չէ բաժանոր-
դագնոյն մէկ տասներորդը կամ մէկ քը-
սաներորդը գոնէ վճարել, և միւս ընկե-
րակիցներուն հետ կը համաձայնի նուէր
խնդրելու թերթերը։

Ասանք բարոյական պզտիկութեան
նշան են։ Ազնիւ ժողովուրդ մը մտաբո-
կան չի լինիր։

Այս ամենուն վրայ աւելցուր հասա-
րակութեան անհասնում և անտեղի քըն-
նադատութիւնը և անհուն պահանջոտու-
թիւնը, որ սպերախոտութիւն և անքաղա-
քավարութիւն սխանդամայն է։

Հայ ժողովուրդ, քիչ մը քաջալերել
սովրէ քու լուսաւորութեանդ ախտառող
գործաւորներդ։ Քիչ մը առատաձեռն
եղիր որպէս զի իրաւունք ունենաս դու
քեզ ազնիւ և յառաջդիմասէր ժողովուրդ
մը համարելու։

ԹՈՒՆԱՒՈՐ ԿՐԻՉՆԵՐ

Պոսթոնէն Մշակին գրող «Արմէն»ը
սկսած է «Տիգրիս»ի ջրերն ալ անուշով
իւր երախայական շողութեանով։ Այդպի-
սի աղտոտութիւններ կրել կրնայ «Տիգ-
րիս» պատիւ համարիլ իրեն, բայց ՀԱՅՔ
չէ կարող իւր ընթերցողաց առջև դնել

բովանդակ գարշանքը։ Կը բաւէ անոնց
սաչափն իմանալ թէ Արմէն ինչպէս փոր-
ձած է հաստատել իւր այն ամբաստանու-
թիւնը թէ ՀԱՅՔի լեզուն «մութ և ան-
հասկանալի է»։ Նա որոնք գտեր է
ՀԱՅՔի չգիտենք ո՛ր տարիներէն կամ
թիւերէն՝ չորս խօսք, ամենէն մութ և
անհասկանալի նմոյշները, ըստ իւր մտին։
Ահա դարհուրելի՛ նմուշներուն մէկը.
«Յէգ պատանիմ ընդ հասնելմ ի տուն կը մեռ-
նի»։ Զարմանալին հոն է որ այսօր այդ
անհասկանալի խօսքը Վանցի պարզ գորչ
ծաւորի մը կարգացի և անոր հասկանալի
դտնուեցաւ։ Կարդացի «Հայք»էն նաև
քանի մը յօդուած կամ երկար պարբե-
րութիւններ Բաղէշցի, Վանցի, Մալա-
թիացի, Խարբերդցի և Արաբկերցի գոր-
ծաւորներու, և ամէնքն ալ կրկին ու
կրկին յայտարարեցին թէ ամբողջը կը
հասկնային։ Եթէ Արմէն գիտական ոգի
քիչ մ'ունենար, այսպիսի փորձեր կ'ա-
նէր թուղթ մրտաւելէ առաջ։ Բայց նա
ոչ միայն զուրկ է գիտական ոգիէ, այլ
և հասարակ խղճմտութենէ, վասն զի
այս թերթի լեզուն «մութ և անհասկա-
նալի» կոչելով՝ ընթացիկ լեզուն, սովո-
րական ոճը ասել կ'ուզէ, մինչդեռ իւր
ցոյց տուած օրինակները բոլորովին բա-
ցառիկ կամ հազուադիւս երևոյթներ են
այս թերթին մէջ։ Չենք կարծեր որ ընդ
նախադրութեամբ աներեոյթ ներկայի
գործածութեան աւելի քան մէկ օրինակ
գտնուի ՀԱՅՔի ութ տարուան բոլոր շր-
ջանին մէջ։ Ասկէ կրնաք դատել ՀԱՅՔի
դատիչը—միտքը, խիղճը, ասել կուզեմ
անմասութիւնն ու անխղճութիւնը, ինչ-
պէս նաև անհամեստութիւնը։

Եւ շատ կան այդպիսի խայտառակներ,
որք հայ ժողովրդի անխելահաս դատուն
իմացականն և բարոյականը կը թունաւո-
րեն։ Թու՛ք զթոյնը, հայ ժողովուրդ,
մի՛ կլկեր, թու՛ք։

ԱՅԼՆԻԱՅԼՆԻ

Արպանիա ևս առանձին ինքնօրէն եր-
կիր մը լինել կ'ուզէ։

Պուկարիա 150,000 զօրք երկու կամ
երեք շաբթու մէջ կրնայ պատերազմի
դաշտն հանել։ Թուրքիա ևս պուկարա-
կան սահմանագլխին վրայ իւր զինուո-
րական ոյժը կ'աւելցունէ։

Ռուսական դեսպան Զինովիէֆի խիստ վարմունքին նայելով՝ իբր թէ Սուլթանը հրամայած է որ ռուսական սահմանագլուխը տանող ռազմային ճամբաներն շուտով աւարտուին:

* *

Տիար Յ. Սարկաւագեան, հայ երաժիշտը, մեր ազգային երգերը ծայնագրութեամբ կամ նօթայով մէկտեղ պիտի հրատարակէ մօտերս: Հատորը պիտի պարունակէ ութսունի չափ հին ու նոր երգեր՝ ծայնագրեալ մէկ կամ աւելի եղանակներով: Այսպիսի գործոյ մը պէտքը շատ զգալի էր և ամեն երկրէ հայրենակիցներ կը խնդրէին այս կամ այն երգը ծայնագրուած ձեռք ձգել: Փափաքողք կրնան այժմէն յղել մէկ տուար, տպագրական ծախքերուն դիւրութիւն մը աւելու համար, և ստանալ գիրքը երբ լոյս տեսնէ: Ասով խնայած կը լինին կէս տուար, վասն զի հրատարակութենէն յետոյ գինը մէկ ու կէս տուար պիտի լինի:

Հասցէն է—

H. Sargavakian 289 Dean St.,
Providence, R. I.

* *

Չատրճեան եղբարք իրենց վաճառատան նոր ճիւղ մը բացած են ի թիւ 78 Grand St.— Հին ճիւղը կը մնայ ի թիւ 369 B. Way. Այս կարգադրութեամբ աւելի ընդարձակ գործեր անելու միջոցներ ունին:

Եարտըմեան եղբարք իրենց վաճառատունը փոխադրած են ի թիւ 594 B. Way և ճարճական վաճառքներու ահագին շրջանակ մը աւելցուցած են խրեւելեան գորգերու ճիւղին քով:

Քոսթիկեան եղբարք Iran Co. անունը առած են:

Գարակէօզեան եղբարք գորգի վաճառատուն մը հիմնած են ի թիւ 365 B. Way.

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մ. Ա. Պ. Փօքիփօի.— Չեր հարցած անձին հասցէն է 832 P. O. B.

Ս. Ա. Կ. Սէլամ.— Չեցի յաջորդ թուով պիտի պատասխանենք:

AMERICAN EXPRESS CO'S MONEY ORDERS FOR ARMENIA.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԵՂԻՉ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՄԸՆԻ ՕՐՏԸՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Էն ապահով, էն աժան և լաւագոյն կերպը Հայաստան ստակ ղրկելու: Այս Ընկերութիւնը միջոց ունի իւր գրամական հրամանները վճարելու Հայաստանի մէջ ամեն տեղ (ուր թղթատուն, post office կայ) ուր գրամ կրնայ ղրկուիլ:

ՊԱՅՄԱՆՔ

ոչ աւելի քան	\$5,	5 սէնթ
« » »	10,	8 »
» » »	20,	10 »
» » »	30,	12 »
» » »	40,	15 »
» » »	50,	18 »
» » »	100,	30 »

ՀԱՅ ՆԿԱՐԻՉ

Մ. Գ. ՍԵՐԱՅԼԵԱՆ

ARARAT FINE ART STUDIO,

Տնօրէն Արարատեան գեղարուեստական արուստանոցին (Studio) ի Շիքափօ, կը ծանուցանէ թէ ամեն տեսակ կենդանագիրներ և տեսարաններ, սև կամ գունաւոր բէսթէլ, ջրաներկ և իւղաներկով կը պատրաստէ, լուսանկարէ կամ կեանքէ օրինակելով. արտասահմանի Հայեր ևս կրնան թղթակցիլ:

Հասցէ

M. K. Serailian
42 Central Music Hall,
Chicago, Ill.
U. S. A.

* *

ԿԱԶՄԱՏՈՒՆ ԼԷՊԵՐՍԻ

Գիրք և տետրակ կը կազմենք ամեն տեսակ կազմով և չափաւոր գնով:

Մեր հասցէն է

Woolff Diebers,

104 and 106 W. 25th St.
New York.